ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

‘‘ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ’’ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն ‘‘Հայաստանի հանրապետության բյուջետային համակարգի մասին’’ օրենքի 27.1 հոդվածի և ‘‘Տեղական ինքնակառավարման մասին’’ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 83-րդ հոդվածի՝ օրենքով սահմանված կարգով կազմել է Վաղարշապատ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ):

Վաղարշապատ համայնքի 2025-2027 թվականների ՄԺԾԾ-ն հանդիսանում է Վաղարշապատ համայնքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը հանդիսանում է ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է կանխատեսվող Վաղարշապատ համայնքի հաջորդող 3 տարիների եկամուտները, դիֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, ծախսային ուղղությունները ըստ ոլորտների: Նախագիծը կընձեռի համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ և որը ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով, ընդ որում սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվի բյուջետային ծրագրերի շարունակության ապահովման ֆինանսական մեխանիզմները: